



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հաճախեալստե՛ղ.

Շումբ

ՍՐԻՆԳ

13733

Շումբուօթերւոյ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

—\*—

1884—1890

—i.\*.i—

Ման Նաթայգորսոս  
Եւ Վոլոճկոս

ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆԻ.

1891

(31)



891.99  
Մ-57

մ

ՍՐԻՆԳ

մեծագույն Կոլլեկտ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1884—1890

ՄՈՍԿՈՒՍ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1891

8121

4118

РГ 448

4118

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 7 Мая 1891 г.

0881-4881



4563  
41

Типография М. Бархударянъ, Газетный пер. д. Лянозова, Москва.

1881

# ՋԵՑԹՈՒՆՑԻ ԿՆՈՋ ԵՐԿԸ

Զարթիր, մանուկ իմ նազելի,  
Բնց այդ պայծառ աչերը,  
Թերթերունքէդ քունը թօթուէ,  
Գիրկը հանգիր քու մօրը.  
Բաւ է որքան բարի հրեշտակը  
Հերած ասին երազում,  
Ազմ արի քեզ այն պատմեմ  
Ինչ պիտ' տեսնես աշխարհում...

ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱ.

Հերիք, որքան քնեցիր,  
Իմ հոգեկից Արամիկ,  
Հերիք, որքան կապանքը  
Սեղմեց կուրծքդ քնքուշիկ:

Արեգակը երկնքում  
Արդէն վաղուց է վարթել  
Եւ ոսկեփայլ շողքերը  
Երկրիս վրայ տարածել:

2003

Ճնճղուկներն էլ ծառերի  
Վրայ հանգէս են սարքել,  
Ամեն մէկը սուլում է  
Իր կրճքիցը անարգել:

Ծովի վրայ նաւակը  
Նոյնպէս հանգիստ, անգործ չէ,  
Նա էլ մարդկանց և մթերք  
Շտապ տանում բերում է:

Ողջ աշխարհը անդադար  
Գործում է իբր մեքենայ.  
Պարապ, անգործ մարդիկներ  
Չեն երևում համարեա:

Իսկ դու, սիրուն բալիկս,  
Երկար-երկար ես քնել,  
Դեռ ևս ոչ մի անգամ  
Թուխ աչերդ չես բացել:

Ես քեզ համար, սիրելիս,  
Նոր-նոր շորեր եմ կտրել,  
Սակայն ամուր կտաւից—  
Մեղուկումը պինդ պահել:

Խաղալիկներ չեմ տալու  
Մանկիկ ձեռքդ վարժուելու.  
Փոքրիկ զէնքեր պատրաստ են  
Մարտի համար վարժուելու:

Զբօսարան ընտրեցի  
Վայրի, ժայռոտ լեռները,  
Եւ զըջերի փոխարէն  
Զինուորական խաղերը:

Ամեն տեղ կեանք, յնձութիւն,  
Ճոխ և շռայլ ապրում են.  
Ամենքն ուրախ դէմքերով  
Իրանց լուծը տանում են:

Սակայն զարթի՛ր, սիրելիս,  
Տի՛ս անքն անքն կործանուած.  
Սոված, ճնշած ժողովուրդ,  
Նախնի փառքից խորտակուած:

Նրա համար ես զինուոր  
Քեզ ընտրեցի, անուշիկ,  
Որովհետեւ նա է քո  
Ունահարուած հայրենիք. . .

Մայիսի—1884

## Ս Ո Ւ Ն Կ

Մեղամաղձոտ, տխուր զէմքով  
Շրջում էի կանաչ հովտում,  
Նիհար ձեռքս դրած ճակտիս  
Ես վշտացած միտք 'ի անում:

Զգուել էի փուչ աշխարհի  
Սրտամաշուկ կարգ ու կանոնից.  
Եւ սիրտըս խիստ դառնացել էր  
Ստոր մարդկանց բիրտ խօսքերից:

Ամեն կողմից ատելութիւն  
Դէպի բարին ու գեղեցիկ.  
Ամեն կողմից մամոնային  
Խնկարկում են մոլի մարդիկ:

Դրա համար բազմութիւնից  
Փախել էի սարսափահար,  
Որ բնութեան ազատ ծոցում  
Ես գտնէի ինձ մխիթար. . .

Յանկարծ մի ձայն մեղմ, սրտառուչ  
Ախորժ հնչեց իմ ականջին.  
Յեա նայեմ, ո՛հ, տեսնեմ սոխակ  
Կանգնած ծառի փոքրիկ ճիւղին:

Նա երգում էր իր երգն անոյշ  
Այնպէս քաղցր, այնպէս փափկիկ,  
Որ դայլայլիկ նրա ազգու  
Շարժեց սրտիս քնքոյշ թելիկ. . .

Ես մոռացայ համայն աշխարհ  
Իր անզգայ շնչողներով,  
Տեղի տուին ցնորքներըս  
Խորհրդաւոր իրանց մտքով:

Իսկ աչերըս լցուեցին  
Գոհարի պէս արտասուքով,  
Վշտահարուած սիրտըս ձխած  
Անմահական խնդու թիւնով:

Ես հասկացայ վեհ սոխակի  
Ախորժելի, անոյշ լեզուն,  
Եւ իմացայ արտասուելով  
Այն թռչունը ի՛նչ էր ասում:

Նա լալիս էր այս աշխարհի  
Լկտի մարդկանց զորձքի վրայ,  
Որ կենարար արդարութիւն  
Նրանցից է միշտ բացակայ. . .

Նա՛ զրկածին, յուսահատին  
Ե՛ւ կեանք և՛ յոյս էր ներշնչում,  
Նա՛ չարերին, անգութներին  
Վե՛հ Արարչից մահ էր խնդրում:

Նա ստրուկներին, ճնշածներին  
Յորդորում էր դէպ՝ աշխատանք,  
Որովհետեւ աշխատութիւն  
է ճորտութեան միակ փրկանք:

Երգէ՛ր, սուլէ՛ր, չքնաղ սոխակ,  
Քո աննման երգը սիրուն,  
Հնչէ՛ր ձայնդ բարձր, բարձր,  
Լսեցնել տուր միաբլ ամենուն...

Ազգեցի՛ր, ոհ, կոտորած սիրտս  
Քո ոգեշունչ, մեղմ երգերով,  
Ահա՛ կրկին դէպի մարդիկ  
Դիմում եմ ես վե՛հ քայլերով...

18 Սեպտեմբեր—1884.

## 0 2

Ա Ռ Ա Ս Պ Ե Լ.

Օձը սոսկման և երկրպագութեան  
էակ է, որա համար մարդիկ անհաշտ  
ատելութիւն ունին և կամ խոնարհ-  
վում են նրա հանձարի առաջ...

ՇԱՏԱՐԻԱՆ

Օձից ամեն մարդ շատ է վախենում.  
Նրա անունը երկիւղ է ձգում  
Մեծի թէ փոքրի—ամենի սրտում—  
Նրան տեսնելով սրտաճաք են լինում:  
Փոքրիկ պատանին իւր ծնողներից  
Միշտ զգուշացնող խօսքեր էր լսում—  
Հեռու մնալ մեծ ու փոքր օձերից—  
Նրանց խայթելը մահ է պատճառում:  
«Բարկացնել օձին՝ սարսափելի է,  
Վրէժը երբէք նա չի մոռանում.  
Շարունակ նրա ետնից ման գալով՝  
Օձն իր միաբն ի կատար է ածում»...

Ծնողների այդ մշտական խրատ՝  
 Պատանու վրայ սարսափ էր ձգում,  
 Օձին տեսնելիս՝ թողնում էր բանը  
 Եւ սրտապատառ իրանց տուն վազում...  
 Պատանին մէկ օր այգում ման գալիս՝  
 Յանկարծ առաջից բարակ օձ սողաց,  
 Գլուխը բարձր պահած՝ շփալով  
 Արքայի նման առաջ նա դնաց:  
 Պատանու գոյնը թռաւ, սփրթնեց.  
 Նրա ռաները սկսեցին դողալ,  
 Լիզուն պապանձուեց, սիրտը պինդ խփեց,  
 Զրկարողացաւ քայլ առաջ դնալ:  
 Օձը երկար էր, գլուխը պտտիկ,  
 Իսկ մէջքը բարակ, մաքուր գեղեցիկ.  
 Հէնց կարծէք մէջքին կապած լինէին  
 Արնիւ, պատուական արծաթի գօտիկ:—  
 Օձը խոտերից կրկին երևաց,  
 Պատանու մօտով սուլելով անցաւ.  
 Խեղճ տղան նոր շունչ քաշեց, հանդարտուեց.  
 Օձը նրան խղճաց, փնտռ չըտուաւ:  
 Նա սրտապնդուեց, մտքումը խնդաց,  
 Օձի արածից փնտց զարմացած.  
 Մեղմացաւ սիրտը, երկիւղը փախաւ,  
 Իէպի այն օձը համակրանք զգաց:  
 Պատանին վստահ շարժուեցաւ տեղից  
 Օձին անպատճառ գտնելու յոյսով,  
 Կամենում էր նրա հետ խօսել, դատել,—  
 Սիրեց այն օձին, սիրեց նա սրտով...  
 Ծառի փեչակում գտաւ նա նստած  
 Իբրեւ անվահեր, հզօր թագաւոր,

Կարծես փառահեղ նա քնանում էր,  
 Փափկաթե քամին տսում էր օրօր:  
 Պատանին խնդրէ, շտապ մօտեցաւ  
 Եւ պատկառանքով նա այսպէս խօսեց.  
 «Ո՛վ վեհ, արարած, դու իմ օձ-եղբայր,  
 Քո արարմունքը իմ սիրտը շարժեց,  
 Քո օրինակելի մեծահոգութիւն  
 Իմ մէջ դէպի քեզ անմար սէր ձգեց:  
 Ասա՛ խնդրում եմ, պատուական եղբայր,  
 Ինչո՞ւ ամենն էլ վախենում են քեզնից,  
 Քո միայն դիւթող ձայնը լսելով  
 Շուտ հեռանում են քո անցած տեղից:  
 Քեզ համար մարդիկ շատ են մտածում,  
 Որ քո խայթոյից միշտ ազատ մնան.  
 Նոր հնարքներ են նրանք յօրինում,  
 Զնշել, ջախջախել ձեր ցեղը համայն:  
 Սակայն ես տեսայ, ինձ չըխայթեցիր,  
 Երկու անգամ իմ մօտով անցար.  
 Ասա՛, ինչո՞ւ քեզ տսում են մարդիկ,—  
 Եկայ իմանալ զրա ձիշտ պատճառ...»

Իմաստուն օձը հեգնական նայեց,  
 Գլուխը բարձր պահելով խօսեց.  
 «Ազնիւ պատանի, միտքդ հասկացայ,  
 «Քո սիրտը փորձել միայն կամեցայ.  
 «Երկու անգամ քո մօտով անցնելով՝  
 «Կամեցայ քեզ էլ ես լաւ հասկացնել,  
 «Որ դուր է մարդոց կասկածն ու երկիւղ,  
 «Մենք չենք կամենում ոչ ոքի փնտսել...  
 «Մեր բնուորութիւն լաւ չեն ծանաչում,

«Վնասակար, խայթող օձին կոչելով՝  
 «Մեր յեղը ջախել աշխատ են լինում:  
 «Բայց մեր պատիւը միշտ պահպանելու  
 «Ունենք փառաւոր, թունաւոր խայթիչ,  
 «Մեզ սպանանել, ջախել ուղողը  
 «Ձեռք է վերցնում իր թանկագին կեանքից:  
 «Բայց զուր է դրանց ամեն աշխատանք,  
 «Մենք անմեղներին երբէք չենք խայթում,  
 «Առանց պատճառի ոչ մի շնորհից  
 «Մենք վրէժխնդիր լինել չենք ուզում:  
 «Բայց եթէ մեզնից շատ վախենում են՝  
 «Այդ մեծ պատիւ է օձերի անուան,  
 «Նշանակում է հեշտ պատառ չենք մենք,  
 «Որ կարող լինեն մեր յեղին կուլ տան...  
 «Եթէ թշնամուդ ոտքը կը լիզես՝  
 «Նա քեզ իր հլու սարուկ կը շինի,  
 «Բո ստացուածքիդ, սրտիդ տիրելով  
 «Ի վերջոյ կեանքից իսպառ կը ջնջի...  
 «Եղի՛ր դու ևս վրիժառու օձ,  
 «Ողջ ոյժով կռուի՛ր քո թշնամու դէմ,  
 «Փոյթ չէ եթէ դու իսպառ կը ջնջուես,  
 «Բայց պատիւդ կը մնայ բարձր, վսեմ...  
 «Ահա դարերով մեր դէմ գործում են,  
 «Կամենում են մեր յեղը փչացնել,  
 «Մենք բոլոր ոյժով ընդդիմանում ենք—  
 «Մեր նշանաբանն է պատուի համար զոհուել...  
 «Եւ ահա ամենն էլ մեզ չեն զայրացնում,  
 «Գիտեն, վրէժը վաղ-ուշ կը հանենք,  
 «Մեր փոքր մարմնից, մեր բուռն ոյժից  
 «Պատկառանք զգալ սովորցնել գիտենք...

«Օձն անմեղին չի փնտսում, կծում,  
 «Նա պատուի համար զոհվում է, տանջվում,  
 «Որ իրաւունքը, անձը ճանաչեն,  
 «Ամեն շնորհի պատիւը պահեն»...  
 Պատանու կուրծքը ազատ շունչ քաշեց,  
 Օձի վեհ խօսքը նրա սիրտը շարժեց...  
 Այնուհետեւ նա օձին տեսնելով՝  
 Չէր վախենում և ոտները զոյգում,  
 Մակայն օձերի աղնիւ արարքից  
 Նա օրինակ առնել էր աշխատում...

25—26 Մարտ—1886.

# ԳԵԼԵՆԵԻՈՐ

Ա Ի Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հին Հին դարերում ընդ միշտ յայլթական  
Սուրն էր ախրում և աշխարհս վարում,  
Եւ անգրթութիւնն ահարկու բերնով  
Խեղդում էր ամեն աղնիւ զգացում.—  
Իսկ արդարութիւնն մատաղ ջանքերով  
Կռւում էր ընդդէմ նենգոտ չարութեան  
Եւ միշտ փորձութեան ամեն ըսպէին  
Ուղարկում էր իր համարձակ վահան:

Ահա այդ դաժան, խտառղին դարում  
Ամրապատ, նեղլիկ կենսամաշ բանտում  
Մի կալանաւոր անխռով զէմքով  
Քայլում էր աչքը զեափն խոնարհած,  
Իր մտածմունքով անձը պաշարուած:  
Նրա մեծամեծ, սեփական աչեր,  
Յաղթանդամ կռներ և բարձր հասակ  
Կրէին ախպար մի յաղթող ազգի  
Նուիրական գործում, աներկիւղ, արի:

Սյո՛, գործել էր նա վեհանձնութիւն  
Համարձակ սրտով, իրան մոռացած,  
Նրա բաղուկը երբէք չէր դողում,  
Երբ մորթում էր իր անարգ ծնողաց:

Նրա աչքերը արիւնով լցուած  
Զրնգող սուրը համարձակ ձեռքին  
Ուժեղ հարուածով խողխողեց ծնողաց...  
Եւ երբ ամբօխը փնտրէր ոճրագործ՝  
Նրանց հարազատ որդին սիրելի  
Արիւնոտ սուրը իր ձեռքին բռնած  
Ամբօխը ձեղքեց դուռաց համարձակ.  
«Մի՛ մեղադրէք ոչ ոք՝ ես մորթեցի»...  
Նրա ձեռն ոտը պինդ շղթայեցին  
Եւ հայհոյանքով քաշ տուին տարան  
Դէպի դատարան արդարութեան:  
Ծնողասպան որդին անվախ, համարձակ  
Կանգնեց սուածը դատաւորների.  
Նրա կրծքի տակից որսուաց սիրտը,  
Խօսեց ճշմարիտ խօսքը պաշտելի.  
«Իմ ծնողներս սուտ փառքի համար  
«Մոռացան իրանց մայրենի լեզուն.  
«Ընդունեցին նրանք ուրիշի կրօն,  
«Փոխեցին իրանց պատուական արիւն...  
«Պատանի էի ես այն ժամանակ,  
«Կամէին ինձ ևս ազգափոխ անել.  
«Եւ եկաւ իմ մէջ ազգային զգացում,  
«Վճռեցի լիախ ծնողաց թողնել...  
«Հինգ երկար տարի թափառում էի  
«Ուրիշ երկիրներ անաէր, անպաշտպան».

«Իմ սիրտը երբեք չըհանգստացաւ,  
 «Սպանութեան միտքը քանի զնայ  
 «Այնքան իմ մէջը բորբոքուեցաւ...  
 «Վճռեցի սրբել ամօթալի կեղտը,  
 «Որ ժանգի նման կրծում էր իմ սիրտը,  
 «Եւ ահա մէկ օր դառնալով հեռուից  
 «Լիրբ զլուխները անցրի իմ սրից...  
 «Մեծ դատաւորներ, ես արգար եմ:  
 «Ես արգարութիւն միայն գործեցի,  
 «Ինձ Արարիչը հրաման տուեց,  
 «Ես նրա կամքը կատարեցի»...  
 Լուեց անմեղը՝ զլուխը կախեց,  
 Դատաւորները վճիռը տուին:  
 —Լիրբ ոճրագործին տանել պատժարան,  
 Իսկ հինգ տարուց զէպի կախաղան...»

Եւ ահա անմեղ կախնաւորի  
 Հինգ երկար տարին լրացաւ, հասաւ:  
 Այն օրը վերջ պիտ' նրա կեանքին,  
 Պիտի խեղդէին արգարի հոգին...  
 Հինգ տարի երբեք նրա բերանից  
 Չէ լսուել մի որ և է արտունջ:  
 «Ես արգարութիւն, հէգ արգարութիւն,  
 «Միայն գործեցի», գոչել է անմուռն...»

Այժմ էլ նա լուռ, մոտխոհ զէմքով  
 Քայլում է բանտում հաստատուն քայլով:  
 Բայց ահա նրա շրթունքը զողաց,  
 Գոռալով սիրտը համարձակ-խօսաց:  
 «Այսօր, ես զիտեմ, ինձ պիտի խեղդեն,

«Մի՞թէ անարգար գործ կատարեցի.  
 «Ոհ, երբեք, երբեք, ես արգարութիւն,  
 «Հէգ արգարութիւն միայն գործեցի...  
 «Բայց Աստուած իմ, Ամենակարող,  
 «Ներիր, ոհ, ների՛ր, սրանց ամենին.  
 «Ձեն իմանում ինչ են կատարում,  
 «Ոչնչացնում են անմեղի ողին:  
 «Ես համաձայն եմ, թող ոչնչացնեն,  
 «Թող ինձ յաւիտեան աշխարհից զրկեն.  
 «Արդեօք անմեղներ ընդ միշտ խեղդելով  
 «Երևան կըգայ բուն արգարութիւն,  
 «Կըպաշտուի մէկ օր ձգմարտութիւն...  
 «Թող ինձ տանեն կախաղան խեղդեն,  
 «Իմ ծաղիկ կեանքը մոխիր դարձնեն,  
 «Ես բնաւին չեմ ցաւում, արտնջում,  
 «Միայն կըգոչեմ՝ «սուրբ արգարութիւն»...»

Բանախ դռները այնժամ բացուեցան,  
 Ծնողասպանին կախաղան տարան:  
 Եւ ոչխար ամբօխը ի հանդէս ելաւ,  
 Իսկ խեղդուողը լուռ, խաղաղ ժպտեցաւ...

26 Օգոստոսի—1886.

Դեռ մանուկ էր զուարթ, անմեղ,  
 Լոկ խաղերն էին նրա զբաղմունք.  
 Իբրև թիթեռնիկ թռթռալով  
 Դաշտերից քաղէր գոյն-գոյն ծաղկունք.  
 Ամեն պսպղուն, գեղ առարկաց  
 էր նրա սրտի միշտ ցանկալին,  
 Աշխարհի վրայ նա չէր խորհում,  
 Եւ չէր իմանում չարն ու բարին:

Դարձաւ պատանի, միտքը բացուեց,  
 Սրտումը վառուեց սնշէջ կրակ,  
 Գլխումն եռ եկան անթիւ մտքեր,  
 Եւ սիրտը խփեց շատ համարձակ:  
 Զանազան քաղցրիկ ցնորքներով  
 Յուզում էր իր միտքը խոհուն.  
 Կամէր հարթելու իր ճանապարհ,  
 Եռանդով գործել անվերջ, անհուն...

Եւ երբ նա եղաւ երիտասարդ,  
 Քայլերը ուղղեց դէպի ամբօխ,

Եւ համարձակ և՛ վեհանձնաբար  
 Սկսեց քարոզել իր գաղափար...  
 Հնչեցրից ձայնը ժողովրդի մէջ—  
 Մշտական լինել արդարադատ.  
 Ողջագուրել սուրբ ճշմարտութիւն,  
 Պաշտպանել ընդ միշտ արդարութիւն...

Մեծ շփոթ ընկաւ ամբօխի մէջ  
 Սկսեցին հայհոյել կատաղաբար.  
 Եւ ուխտեցին վռէժ հանել,  
 Խեղդելով նրա ձայնը արդար:  
 Բայց նա տակաւին չըվհատեց,  
 Անվախ ոտք դրաւ կիսանքի սեամին,  
 Սուրբ գործը անվախ շարունակեց,  
 Եւ չըվհատուեց ամենեւին:

Եւ եղան քանի մի համակրող,  
 Որոնք սիրեցին նոր գաղափար.  
 Նա խրախուսուած դրանց խօսքից՝  
 Բացեց վեղճումներ բիւր, անհամար...  
 Յուցեց ամբօխին խաբէութիւն,  
 Այս և այն անձանց կեղտոտութիւն.  
 Եւ գրեց գրքեր, և՛ տաղ, երգեր,  
 Ի լոյս հանեց նա անթիւ ցաւեր...

Դղբոցն ընկաւ ժողովրդի մէջ,  
 Կամեցան նրան քարկոծ անել.  
 Կաշառակերը և հարուստը  
 Նրա դէմ էին անվախ զինուել:

Դրանք ամեն օր բամբասեցին,  
Եւ գլխին նղովք միշտ թափեցին,  
Այդ բաւական չէ. քաջ հերոսին  
Իբր մեծ յանցաւոր հռչակեցին...

Եւ տարան խոնաւ բանտը դրին...

Շատ տարիներ թռան, անցան.

Նրա գործերը շուտ մոռացան,  
Մոռացան նաեւ անունն անդամ...

Եւ խոնաւ բանտում իր մանկութեան  
Ընկերները նա մտաբերեց.

Բայց նրանք դարձան բարձր, հարուստ...

Եւ քաջ հերոսը կարծես տխրեց...

Այո, նրա հինգ ընկերները

Ամբոխի համար չբռնեցին.

Եղան կեղծաւոր ու շահամոյ,

Զօրեղի ոտքը լափ լեզեցին:

Սակայն նա չարեց խաբէութիւն,

Անձը մոռացած փաստակեցաւ,

Անարգ վօրեղից նա չըվախեց,

Նրա գործերը ի լոյս հանեց...

Դրա համար չքառուին խորշ մի,

Որ փաստակած գլուխը դնի...

Եւ բանտում «հայ, հայ», խօսքը բերնին՝

Սլացաւ երկինք նրա հոգին...

Անցան տարիներ. խելօք մարդիկ

Օրհնանքով, ծիսով նրան յիշեցին.

Համակրեցին նրա մեծ գործք,

Եւ մահարձան վրան կառուցին:

Տիտաւ երկնից նրա ոգին

Տապանադիրը սկէզօծած.

«Ամբոխի համար աշխատողը

«Մոռում է մեծ, ընդ միշտ անմոռաց.

«Կրդան նոր մարդիկ—Սրա անուան

«Կըլինեն անվերջ, մի՛շտ փառաբան»...

8 Սեպտեմբերի—1886.

## Մ Ի Ր Ո Պ Է

Ահա սահեցաւ, անցաւ մի րոպէ...  
Բայց այդ մի րոպէն քանի գառնութիւն,  
Քանի սուգ ու լաց, քանի խնդութիւն,  
Իր հետը տարաւ յուսահատ գանգիւն...

Մի տեղ մայրը վաղուց հեռացած  
Բախտաւոր որդին իր զիրեն առաւ,  
Միւս սգաւոր, վշտահար մայրը  
Իր միակ որդուն գերեզման դրաւ:

Այդ մի րոպէում հէզ սիրահարը  
Իր սիրած աղջկան չքնաղ զիրեն ընկաւ,  
Այդ մի րոպէում իր պաշտած կուսին  
Խեղճիկ պատանին դէպ հողն իջացրաւ:

Այդ մի րոպէում քանի չարասիրտ  
Եւ ազնիւ ոգի երկինք սլացան,  
Այդ մի րոպէում քանի նոր ոգի,  
Նոր հողածին էակ աշխարհ եկան:

Մի տեղ վեշտ ու մահ, յուսահատութիւն,  
Միւս տեղ համբոյներ և ուրախութիւն,  
Մի տեղ տխրութիւն, աղիողորմ սուգ,  
Միւս տեղ խնդաղին երգ, զուարճութիւն:

Մի րոպէում են անթիւ զուխներ  
Անցնում ու ընկնում փայլուն սրերից,  
Այդ մի րոպէում անհամար մարդիկ  
Յանկարծ փրկվում են խստագին մահից:

Րոպէն է կայսրին դահ բարձրացնում,  
Մի րոպէն նրան գահազուրկ անում,  
Կռուի բռնութիւն րոպէն է վճռում,  
Հաշտութեան դաշտ րոպէում լինում...

Մի տեղ աղաղակ և խառնակութիւն,  
Միւս տեղ խաղաղ կեանք և անդորրութիւն,  
Մի տեղ արիւն ու մահ և անդրթութիւն,  
Միւս տեղ հեղութիւն ու տրդարութիւն...

9 Սեպտեմբերի—1886.

Արք եւ տեսնում եմ անարգութիւն  
Ձօրեղի գործը շղթա՛, փայփայտա՛,  
Մի՞թէ դու չես խղճիս լարերը շարժում,  
Որ անարգեմ այդ գործը կեղտոտ:

Ո Ռ ի Ջ Ս  
Մի անգամ քան իմ անհոգ  
Մի անգամ քան իմ անհոգ  
Մի անգամ քան իմ անհոգ

Երբ ես տեսնում եմ անարգութիւն՝  
Ճշմարտութիւնը ոտնակոխ արած,  
Այն ժամանակ, ո՞վ քաղցրիկ մուգա՛,  
Միշտ քեզ եմ զիմում հոգովս տոչորուած:

Երբ ես տեսնում եմ սրբապղծութիւն,  
Սուրբ մարդոց գործեր լրբաբար պղծած,  
Մի՞թէ դու չես ինձ զօրութիւն տալիս,  
Որ ջատագովեմ սուրբ գործն անարգուած:

Երբ ես տեսնում եմ թշուառ աղքատի  
Ցաւալի կեանքը բիւր-բիւր վէրքերով,  
Դու ես իմ մէջ սէր, իմ գութը շարժում,  
Ցոյց տալ խեղճու կին անհուն ցաւերով:

Երբ ես տեսնում եմ փայլուն արծաթի  
Սոսկալի բերան ճնշող զէնքերով,  
Մի՞թէ, ո՞վ մուգա՛, դու չես յորդորում,  
Օգնել անփորձին ամեն հնարով:

Երբ ես տեսնում եմ անարգարութիւն  
Ձօրեղի գործը շղթա՛, փայփայտա՛,  
Մի՞թէ դու չես խղճիս լարերը շարժում,  
Որ անարգեմ այդ գործը կեղտոտ:

Ոհ, մուգա՛, մուգա՛, տենչալի մուգա՛,  
Դու ես միայն իմ կեանքը պահպանում,  
Առանց քեզ, առանց քո ներշնչմունքի  
Գուցէ խեղզուէի անգութ աշխարհում...

4 Յուլիսի—1889.

Բանի իմ սրտի մէջ վառվում է  
 Սրբազան կայծը անհանդուրժելի,  
 Քո բոլոր ձիւղը զուր, անդոր է.  
 Իմ զգացմունքը քեզ չի խոնարհի:

ԻՄ ԹՇՆԱՄԱՐՆԵՐ  
 Բանի իմ սիրտը բաբախում է  
 չէ՞դ արդարութեան սուրբ գաղափարով,  
 Անմտութիւն չէ՞, աստ, միթէ  
 Խեղդել այդ ձայնը ամեն հրնարով:

Բանի իմ հոգին չէ վարակուել  
 Նիւթապաշտական հրապոյրներով,  
 Արդեօք կարո՞ղ է ժանդը սիրել,  
 Երբ ես ատում եմ իմ բոլոր ոյժով:

Բանի իմ խելքը ջատագով է  
 Սրբազան գործին և աշխատութեան,  
 Մի՞թէ, ասացէք, հնարաւոր է՝  
 Խօսքեր շոյլեմ անարդ ծուլութեան:

Քանի իմ զրիչը աշխատում է  
 Պաշտպան լինել մի խեղճուկ սերնդի,  
 Մի՞թէ պղծութիւն, լըբութիւն չէ՞,  
 Ու օրօր կարգամ խաղաղ կեանքի:

Երբէք, երբէք, ով իմ թշնամի,  
 Արհամարհում եմ քո հզօր շանթեր,  
 Որքան սրես քո նետը ամեհի,  
 Այնքան կը վառուեն իմ զգացմունքներ:

Եթէ զիտենամ մատաղ կեանքս  
 Անգութ խորշակից պիտի թառամի,  
 Սրբազան ուխտըս, վեհ հաւատըս  
 Քո հաճոյքներին ես զոհ չեմ բերի:

Այս անվախ կրօնքի տակ վառվում է  
 Մի զոռ սիրտ հուժկու, անյաղժ կայծերով,  
 Նա պիտի ժայթքէ, պիտ բորբոքուէ,  
 Չի մարիլ երբէք ոչ մի հնարով:

8 Յուլիսի—1889.

## ԱՐԵՐԱԿ

Այստեղ փլատակ, այնտեղ բեկորներ,  
Խարխուլ, տապալուած կիսաքանկ շէնքեր,  
Սև գլուխները ծռած վշտալի՝  
Յիշեցնում են մեզ վիճակ ողբալի:

Այստեղ թեքել է սուրբ եկեղեցին  
Խրոխտ գմբէթը դէպի ցուրտ գետին,  
Այնտեղ արքայի պալատ պերճափառ  
Դարձած է կայան անասնոց համար:

Ո՛ր կողմը նայես՝ տխուր տեսարան՝  
Գլուխն ի կոր անվերջ խաչարձան,  
Ո՛ր կողմը դիտես՝ սրբոց շերիմներ  
Հողի մէջ թաղուած՝ անվախ, անվեհեր...

Կարծես կռուի ահեղադուշ սուր  
Ամեն ինչ արեւ է փշուր-փշուր,  
Կարծես մեծ մարտի արիւնոռչտ դաշտում  
Լինին զինուորներ ընկած աննկուն...

Եւ չըկայ ոչ դք—անվերջ լուռթիւն,  
Նախնի մեծափառ կեանքի չքուծիւն,  
Տխուր է ամեն ինչ, կարծես լալիս են,  
Եւ քո արցունքն էլ ահա դալիս են...

Ո՛հ, անգութ ոսոխ, դու կործանեցիր,  
Սւերիչ ձեռքովդ հող ու մոխիր դարձրիր.  
Բայց ի՛նչ շահեցար, հիւ թշուառական,  
Քո անունն անիծուեց անվերջ, յաւիտեան...

Սակայն կործանուած փլատակի տուաջ  
Ծունկ է խոնարհում մարդ լալահառայ,  
Նրա երերուն, փշրած բեկորներ  
Յիշեցնում են մեզ մեծասքանչ դործեր...

6 Դեկտեմբերի—1889.

Ձ Ո Ն

Երբ երկինքը խառնացած  
 Զով անձրևներ չէ թափում,  
 Մինչ արևի վառ շողքեր  
 Արան ու գաշան է չորացնում,—  
 Այն ժամանակ զիւղացիք  
 Պաղատանքով ու լացով  
 Արարչի գութն են շարժում  
 Մատուշ զոհեր անելով:

Երբ հիւանդը հոգեվարք  
 Պառկած մահուան անկողնում  
 Արձակում է թոյլ հառաչ  
 Եւ վշաշունչ թրպրտում,—  
 Ծնողները յուսահատ  
 Ամեն վեշտ են մոռանում,  
 Եւ աչքի լոյս երինջը  
 Արարչին զոհ են բերում:

Երբ սիրահար պատանին  
 Կուսի կուրծքը սիրասուն

Նախ զրկելու փոխարէն  
 Նրա զագաղն է զրկում,—  
 Այն ժամանակ խղճալին  
 Մոլորվում է, ցնորվում,  
 Եւ նրա սիրոյն՝ գնդակով  
 Իր անգին կեանքն է զոհում...

Կամ երբ անգութ թշնամին  
 Սրով մահ է սպառնում,  
 Եւ տուն ու տեղ, հայրենիք  
 Աւեր դարձնել աշխատում,—  
 Այն ժամանակ հայրենի  
 Ծեր, մանուկ, կին փափկասուն  
 Սուր հրացան ձեռներին  
 Իրանց կեանքն են զոհ բերում:

Այո, կեանքն է զոհարան,  
 Նա բնաւ չէ յագեցնում,  
 Եւ սրբազան, մեծ գործեր  
 Մեզնից զոհ են պահանջում...

## ՏԵՐՈՒՆՑ ՎԵՐՋԻՆ

Ահա՛ անցաւ և՛ մի տարի,  
Տարաւ իր հետ շատ դառնութիւն,  
Շատ բաղձանքներ ցնդան օդում,  
Անվերջ սա՛հեց մեր ցանկութիւն:

Եւ մենք քաշ ենք տալիս մեր կեանք.  
Իսպառ մեռած է զգացում,  
Եւ անասնի վայել կեանքով  
Կամինք պահել մեր զոյութիւն. . .

Ամենայն բան նորից փոխուեց. . .  
Ոչ որ չըմնաց անյոյս, տրտում,  
Մեր բուն յոյսեր և բաղձանքներ  
Հոկ փնացին անմիտ խոստում. . .

Մութ-մութ ամպեր խուն բարդիբարդ,  
Ահ, պատել են մեր ապագան.—  
Մի՞թէ չըկայ մեզ ոչինչ յոյս,  
Մի՞թէ կորանք մենք յաւիտեան. . .

Սակայն կրկին դողդող կերպով  
Երևում է յոյսը դանդաղ,  
Եւ կամի մեզ էլ քնացնել  
Իր դիւթական դրկում չքնաղ. . .

Բայց մենք չըխաբուենք  
Այդ երերուն, շինծու յոյսից,  
Այլ աներկիւղ առաջ դիմենք,  
Զրկախենանք բոց-կրակից. . .

Բաւական է որքան անմիտ  
Յոյսերով մենք խոր քնեցինք,  
Բաւական է որքան անյոյս  
Բաղձանքներով օրորուեցինք. . .

31 Պետկտեմբերի—1889.

## ԿՈՐԱԾ՝ ՍԷՐ

Դարձեալ մաքերիս խորին ամբոխմունք...  
Սիրտս անհանգիստ հէզ կուրծքս է ծեծում.  
Նա ծարաւի է պերճաղեղ կեանքի,  
Նա ուրիշ-ուրիշ տենչանք է խնդրում...

Աւաղ, անհամբոյր, խստաղին կեանքը  
Դարձաւ ինձ համար կատաղի վիշապ,  
Որ իր շանթընկէց զօրեղ ժանկրով  
Կրծում է կուրծքս, կրծում հրատապ...

Իմ բողբոջ կեանքիս մատաղ ծաղիկներ  
Խամրում են կարծես անողորմ կերպով.  
Ո՛հ, չքեղ մէկը փայփայէ նրանց,  
Հասնէ օղնութեան, ա՛հ, շուտով, շուտով...

Դեռ ևս կրծքիս անարատ կոյսի  
Սիրուն զլուխը չէ հանգստացիլ,  
Դեռ ևս նրա հոլանի թևքեր  
Վառուող դէմքս չէ փայել, շոյել...

Մենակ եմ, մենակ... տաղակալի կեանք,  
Մռնչում է սիրտս վիշապի նման,  
Կարծում եմ հեռու, խորին ձորերում  
Կրկանեմ անշուշտ սրտիս առարկան...

Ո՛հ, տուէք, տուէք իմ սուր, հրացան,  
Պիտի թափառեմ, պիտի որոնեմ.  
Սարեր ու ձորեր ոտի տակ պիտ' տամ,  
Որ իմ բաղձանքին իցէ թէ հասնեմ...

Կորած է ամեն, ամեն ցանկութիւն,  
Իմ սուր սուսերը կրծքիս պիտ սեղմեմ,  
Աշխարհից աշխարհ պիտի թափառեմ  
Եւ անարատ սէ՛ր, սէ՛ր պիտի ձայնեմ...

14 Դեկտեմբերի—1890.

## ԸՆԳԻՆ ԽՐԵՍՈՅՍ

Ո՛չ մի բան այս աշխարհում  
Բնաւ ինձ համար գին չունի,  
Ո՛չ մեծագին գանձերին  
Գլուխս չեմ խոնարհի:

Թէկուզ այն խրոխտ իշխանը  
Կուրծքս աստղով զարդարի,  
Թէկուզ իմ մեծ քաջութիւնն  
Ողջ աշխարհին նա յայտնի.

Որքան էլ իմ համբաւից  
Լեռներ, ձորեր զղրղան,  
Իմ անունը հռչակուի  
Մնայ անմահ յաւիտեան.

Մինչև անգամ դափնիներ  
Եթէ գլուխս զարդարեն,  
Եւ ոգելից խօսքերով  
Փառաբանեն, ինձ գովեն.—

Ես այդ ամեն պարծանքին  
Կընայեմ լռի ծիծաղով,  
Կ'արհամարհեմ պի՛ղծ խօսքեր,  
Յետ կըղառնամ զգուանքով:

Բայց եթէ «նա» վշտագէմ  
Խրախուսէ իմ զործեր,  
«Կեցցէ քաջը», նա կանչէ  
Դէմքին ծաղկեն զոյգ վարդեր,—

Այն ժամանակ կիմանամ  
Հռչակուած եմ աշխարհում,  
Այն ժամանակ այդ խրախոյս  
Ինձ կըրայ ոյժ ու զօրութիւն...

18 Դեկտեմբերի—1890.

ԵՍ ՀԱՆՈՒՄ ԵՄ...

Ես հաւատում եմ, երբ մի ժողովուրդ  
Թշուառութեան մէջ տանջւում է հեծում,  
Գալիս է մի օր, մի ուրախ վայրկեան,  
Երբ նրա տանջանքին վերջ է դրւում...

Ես հաւատում եմ, երբ հեզ աղքատը  
Օրով անօթի, քաղցած է մնում,  
Որտեղից որտեղ մի բարերար անձն  
Նրան օգնութեան ձեռք է կարկառում:

Ես հաւատում եմ, որ երբ գեղջուկը  
Յուսահատ սրտով ախ-վեշ է անում,  
Մի խնամատար երկնից ուղարկուած  
Նրան ոչնչանալ բնաւ չէ թողնում...

Ես հաւատում եմ, երբ զօրեղ ճնշմամբ  
Կամին սպանել ագնիւ զաղափար,  
Նա այդ ճնշումից առաւել անվախ  
Գտնում է պատրաստ իր սուրբ ճանապարհ...

Ես հաւատում եմ, երբ արդար զօրծը  
Պղծւում է անարդ կեղտոտ մարդկանցից,  
Գալիս է մի օր, երբ ժողովուրդը  
Փրկւում է նրան լաիրշ ձեռքերից...

Ես հաւատում եմ, որ երբ անդուծը  
Սուրբն իր ձեռքին, զըկում է խեղճին,  
Լինում է մի օր արդար դատաստան,  
Եւ պատժւում է չարը դժոխային...

Ես հաւատում եմ, որ ցուրտ ձմեռը  
Երբ սառցյցներով երկիրս է շղթայում,  
Գետնի խորքն մտած տունկի արմատներ,  
Ո՛հ, չորացնել նա զուր է աշխատում...


28 Դեկտեմբերի — 1890.



# Յ Ա Ն Կ

ԵՐԵՎԱՆ

|                                   |    |
|-----------------------------------|----|
| Զէյթունցի կնոջ երգը . . . . .     | 1  |
| Սոխակ . . . . .                   | 6  |
| Օձ (առասպել) . . . . .            | 9  |
| Կալանաւոր (աւանդութիւն) . . . . . | 14 |
| Մեծ մարդ . . . . .                | 18 |
| Մի բոպէ . . . . .                 | 22 |
| Մուգա . . . . .                   | 24 |
| Իմ Թշնամուն . . . . .             | 26 |
| Աւերակ . . . . .                  | 28 |
| Զոհ . . . . .                     | 30 |
| Տարուայ վերջին . . . . .          | 32 |
| Կորած սէր . . . . .               | 34 |
| Անգին խրախոյս . . . . .           | 36 |
| Ես հաւատում եմ . . . . .          | 38 |



2013

13733

## ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

|                                                                     | Բ. | Գ. |
|---------------------------------------------------------------------|----|----|
| 1. ԵՐԱԽԱՅՐԻՔ, պատկ. 1882—87 Ա. գիրք Գարուն. —                       | 50 |    |
| 2.       »               »               »       Բ. » Ամառ . —      | 50 |    |
| 3.       »               »               »       Գ. » Աշուն . —     | 50 |    |
| 4.       »               »               »       Դ. » Ձմեռ . —      | 50 |    |
| 5. ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ և ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ<br>ՆԵՐ 1880—1889 . . . . . — | 60 |    |
| 6. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ 1884—1890 . . . —                             | 25 |    |

## ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ Է

|                                           |    |
|-------------------------------------------|----|
| 7. ՓՈՔՐԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ, պատկերազարդ . — | 30 |
|-------------------------------------------|----|

## ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է

|                                                                  |  |
|------------------------------------------------------------------|--|
| 8. ԳԱՂԱՓԱՐԻ ԶՈՀ, զրամատիքական բանաստեղծուծին չորս<br>արարուածով: |  |
|------------------------------------------------------------------|--|

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.